ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 121 – Ա **18 փետրվարի 2019 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻՆՉԵՎ 10, 12, 14 ԵՎ 16 ՏԱՐԵԿԱՆ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի, «Մանկապատանեկան սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1. Հաստատել՝

   1). Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի մինչև 10, 12, 14 և 16 տարեկան պատանիների շախմատի 2019 թվականի մարզային առաջնության կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N1 հավելվածի

   2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի մինչև 10, 12, 14 և 16 տարեկան պատանիների շախմատի 2019 թվականի մարզային առաջնության կանոնակարգը՝ համաձայն N2 հավելվածի.

   3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի մինչև 10, 12, 14 և 16 տարեկան պատանիների շախմատի 2019 թվականի մարզային առաջնության մարզային փուլի անցկացման մրցավարական հանձնաժողովի կազմը՝ համաձայն N3 հավելվածի.

2. Կազմկոմիտեին՝

   1) կազմակերպել մրցումների մարզային փուլի բացման և փակման հանդիսավոր արարողություն.

   2) մրցումների ավարտից հետո ներկայացնել հաշվետվություն:

3. Մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Անուշ Պողոսյանին՝ Հայաստանի Հանրապետության

Գեղարքունիքի մարզի մինչև 10, 12, 14 և 16 տարեկան պատանիների շախմատի 2019 թվականի մարզային առաջնության տարածքային և մարզային փուլերի անցկացման օրերին համապատասխան հաստատություններում ապահովել մրցումների մասնակիցների առաջին բժշկական օգնությունը:

4. Մարզպետարանի քարտուղարության պետ Վերգինե Ղուկասյանին՝ միջոցառման անցկացման գործընթացն իրականացնելու համար ապահովել սույն որոշման առաքումը մարզի համայնքներ:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Նարեկ Գրիգորյանին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

Հավելված N 1

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2019 թ. փետրվարի 18 -ի
N 121-Ա որոշման

ԿԱԶՄ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի մինչև 10, 12, 14 և 16 տարեկան պատանիների շախմատի 2019 թվականի մարզային առաջնության կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի

Զազյան Կարեն – ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ /նախագահ/

Հարությունյան Վանիկ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

Պողոսյան Անուշ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

Բաղալյան Կամո - Վարդենիկի Ս. Մխոյանի անվան կրթահամալիրի տնօրեն /համաձայնությամբ/

Շահբազյան Հասմիկ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ

Զարվադարյան Գեղամ - ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի վարիչ

Առաքելյան Ալեքսան- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կրթության,մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի առաջատար մասնագետ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐԱՄ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N2

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2019 թ. փետրվարի 18 -ի
N 121-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի մինչև 10, 12, 14 և 16 տարեկան պատանիների շախմատի 2019 թվականի մարզային առաջնության

1. ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի մինչև 10, 12, 14 և 16 տարեկան պատանիների շախմատի 2019 թվականի մարզային առաջնության նպատակն ու խնդիրներն են՝ նպաստել

- դպրոցականների շրջանում շախմատ մարզաձևի մասսայական զարգացմանը
- արտադպրոցական և արտադասարանական աշխատանքների բարելավմանը
- պատանի շախմատիստների մարզական կատարելագործման ապահովմանը
- Հայաստանի պատանիների առաջնության կիսաեզրափակիչ մրցումներին մարզի հավաքական թիմի մասնակցության ապահովմանը:

2. ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

Մարզային առաջնության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը: Տարածքային փուլի մրցումները կազմակերպում և անցկացնում են մարզում գործող Հայաստանի շախմատի Գավառի, Սևանի, Ճամբարակի, Մարտունու, Սարուխանի, Վարդենիսի և Վարդենիկի մասնաճյուղերը:

3. ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ , ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Մարզային առաջնությունը կանցկացվի երկու փուլերով՝ տարածքային և մարզային: Տարածքային փուլի մրցումները կանցկացվեն 2019 թվականի փետրվարի 15-22-ը , իսկ մարզային փուլի մրցումները՝ 2019 թ. մարտի 5-6-ը, Վարդենիկի Ս. Մխոյանի անվան կրթահամալիրում: Մրցումների սկիզբը ժամը 11^{00}-ին:

4. ՄԱՐԶԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Մարզային առաջնությանը կմասնակցեն Հայաստանի շախմատի ակադեմիայի Գավառի, Սևանի, Ճամբարակի, Մարտունու, Սարուխանի, Վարդենիսի և Վարդենիկի մասնաճյուղերում անցկացված մրցումներում հաղթող ճանաչված շախմատիստները՝ ըստ

տարիքային խմբերի հետևյալ համամասնությամբ. մինչև 10 տարեկաններ՝ 3 տղա, մինչև 12 տարեկաններ՝ 3 տղա, մինչև 14 տարեկաններ՝ 2 տղա, մինչև 16 տարեկաններ՝ 2 տղա և մեկ մրցավար: Ընդ որում՝ մինչ 10 տարեկան պատանիների մրցաշարում մասնակցության իրավունք ունեն առնվազն 3-րդ կարգ ունեցող, մինչ 12, 14 և 16 տարեկան պատանիների մրցաշարում՝ առնվազն 2-րդ կարգ ունեցող շախմատիստները: Թիմի ընդհանուր կազմը՝ 11 մասնակից:

Մարզային առաջնությունը կանցկացվի՝ մինչև 10 և 12 տարեկանների խմբերում շվեյցարական մրցակարգով, մյուս տարիքային խմբերում՝ շրջանաձև: Մարզային առաջնությունը անհատական է: Յուրաքանչյուր խաղացողի մեկ խաղափուլում տրվում է 15 րոպե ժամանակ՝ յուրաքանչյուր քայլի համար 5 վրկ. հավելումով: Առաջնությունը կանցկացվի ՖԻԴԵ-ի կանոնակարգի համաձայն: Յուրաքանչյուր թիմ պարտավոր է ապահովել իր մասնակիցների թվի կեսի չափով շախմատներ և ժամացույցներ: Մարզային փուլի մրցումները կազմակերպում է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը, իսկ առաջնությունը անցկացնում և արդյունքներն ամփոփում է մրցավարական հանձնաժողովը:

5. ԾԱԽՍԵՐԸ

Պատանի շախմատիստների գործուղման հետ կապված ծախսերը հոգում են գործուղող համայնքները՝ օրապահիկ և ճանապարհածախս:

6. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

Մարզային առաջնությունում՝ յուրաքանչյուր տարիքային խմբում, 1-ին, 2-րդ և 3-րդ տեղեր գրված շախմատիստները կպարգևատրվեն հուշանվերներով և հավաստագրերով:

7. ՀԱՅՏԵՐԸ

Մարզային առաջնության մասնակցության անվանական հայտերը ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն մինչև 2019 թվականի մարտի 1-ը հաստատված համայնքի ղեկավարի կողմից:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ [redacted] ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N3

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2019 թ. փետրվարի 18 -ի
N 121-Ա որոշման

ԿԱԶՄ
Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի մինչև 10, 12, 14 և 16 տարեկան պատանիների շախմատի 2019 թվականի մարզային փուլի անցկացման մրցավարական հանձնաժողովի

Հայրապետյան Մերուժան- Հայաստանի շախմատի ակադեմիայի ներկայացուցիչ / գլխավոր մրցավար համաձայնությամբ /

Սարգսյան Կարո – Հայաստանի շախմատի ակադեմիայի Գավառի մասնաճյուղի մարզիչ / քարտուղար, համաձայնությամբ /

Վարդանյան Աշոտ – Հայաստանի շախմատի ակադեմիայի Սևանի մասնաճյուղի մարզիչ / համաձայնությամբ /

Պետրոսյան Մարգարիտ - Հայաստանի շախմատի ակադեմիայի Վարդենիսի մասնաճյուղի մարզիչ /համաձայնությամբ /

Մարտիրոսյան Հակոբ – Հայաստանի շախմատի ակադեմիայի Ճամբարակի մասնաճյուղի մարզիչ /համաձայնությամբ /

Հայրապետյան Արամայիս - Հայաստանի շախմատի ակադեմիայի Մարտունու մասնաճյուղի մարզիչ / համաձայնությամբ /

Արզումանյան Սամվել - Հայաստանի շախմատի ակադեմիայի Վարդենիկի մասնաճյուղի մարզիչ / համաձայնությամբ /

Թորոյան Գնել - Հայաստանի շախմատի ակադեմիայի Սարուխանի մասնաճյուղի մարզիչ / համաձայնությամբ /

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ԱՐԱ ԽԼՂԱԹՅԱՆ